



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 123

29 ՆՈՅԵՄԲԵՐ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԻ

ԵՆ ԵՐ
ՏԵՐԱՆ
ՏՈՒՐԱՆ
ԳԵՂԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ . արծ . վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ .— Արսասան-
ման տար . ֆր . 10 . վեցամս . 5 .— Վճարմունք կանխիկ են :

ՀԱՍՏէ .— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5 . Պայրամ փողոց 5, 4 .
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոյմ ի միասին պրկել:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5:
Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպա-
գրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք,
գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ասորէաներ,
մահազդներ, եւն., եւն.: Դիւները անմեղքեղի կերպով աժան են:
Դեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կող-
մանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆՈՎԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Երրորդ տարի Թ 29 Նոյեմբեր 1913 Թիւ 123

«Սրբազան Բանաստեղծական Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Աւագանց շաբաթները շա-
բաթնակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարէ, ի բարգաւաճան կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն սրագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթները, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կրիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմանաւ:

ՀԻՆ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՎԱԻԵՐՍՈՒՂՐԹԵՐ

ՆԱՄԱԿ ԿՈՍՏԱՆԴՆՈՒ ԱՌԱՋՆՈՅ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂՈՍԻԿՈՍԻ

ԱՌ Ս. ԶԱՆԱՆԱՅԱՊԵՏՆ ԻՆՆՈՎԵՆՏԻՍՏ Գ.

Որչափ գիտենք, այս նամակը տնտիպ է: Չամ-
չեան պատմութեան մէջ շատ հարեւանցի յիշատա-
կութիւն մը կայ՝ Կոստանդին Կաթողիկոսին եւ Ժա-
մանակին Քաջանայապետաց միջեւ տեղի ունեցած
Թղթակցութիւններու մասին:

Դարձեալ միեւնոյն ուսումնասիրէ եւ բարեացա-
կամ բարձրաստիճան տնտեսութիւնն է որ աշխա-
տութիւն յանձն առնող այդ նամակն շնորհակալութեամբ
Վաթիկանու Դիւանէն, կը զրկէ մեզ ի հրատարակու-
թիւն: Կը յայտնենք իրեն մեր խորին շնորհակալիքը
հրապարակաւ:

Յետ մահուն Յովհաննու Մեծարարի Կաթողի-
կոսին, 1220ին Կաթողիկոս բազմեցաւ Կոստանդին Ա.
Բարձրբերդցի (ի Կրիկիոյ) կամ Մովսիսեանցի մա-

կանուանեալ (1220—1267), այդ բազմահանճար եւ
հոգեւոր, մանկութենէն ի վեր սնած ի Վանա Մալ-
ո խանայ՝ կուսակրօն սրբութեամբ. եւ եղած էր հոն
Արքայապետ եւ նաեւ Եպիսկոպոս: Բնութեամբ կարի
մարդասէր էր եւ հայրախնամ, ազօթասէր եւ բազմա-
շէն: Ասոր օրովն է որ աշխարհեալ Զապէլ Թագաւորին
ամուսնացաւ Հեթում Թագաւորին հետ, որ Արշա-
կունեաց ցեղէն էր եւ Բագրատունեաց եւ Ռուբինեանց
եւ Ս. Նեաեւի Լամբրոնացւոյ Տուններուն հետ խնամի
Խնովկենախոս Դ. Քաջանայապետ բազմած է
1213էն մինչեւ 1254:

Կոստանդին Ա. Կաթողիկոսը Գրիգոր Թ. Քաջանա-
յապետին ալիւսալ տնտեսներ գրած էր, ինչպէս Հե-
թում Թագաւոր Զապէլ Բամբուռն հետ Կոստանդին
Նուիրակներ ալ զրկած էր (1239ին) եւ ծանուցած էր
անոր իր սէրն ու հպատակութիւնը, եւ Ս. Պապը
զրկած էր իրեն վերարկու եւ պատմութեան Հայրա-
պետական, եւ Թագ ու մատանի՝ հանգերէ Թղթով-
օրհնութեան: Յետ վախճանի Գրիգոր Թ. Քաջանա-
յապետին, Կոստանդին գրեց նաեւ անոր յաջորդ՝ Խն-
ովկենախոս Դ. Քաջանայապետին Թուղթ շնորհա-
ւորութեան եւ շնորհակալութեան, եւ Քաջանայա-

պետը պատասխանեց իրեն, և կը յորդորէր նաեւ կատարել զխորհուրդ Օծման հիւանդացի:

Բնականորէն ալ թուականէն վերջը գրուած է մեր հրատարակած այդ նամակը:

Այս յարգի վաւերացութիւն կը գտնուի Վատիկանու Դիւանին մէջ՝ Գարակ Է. և Գըրոց Գ. թիւ 13: Հայերէն բնագիրն է ան, որուն վրայէն ուղղուի օրինակուած է ներկայս՝ ինչպէս որ է. Այդ բնագիրը՝ գեղեցիկ երկայն երկու սիւնակի բաժնուած մագաղաթի մը վրայ է: Նամակին տիտղոսը ամբողջուած էր կարմրով գրուած է:

Armad. VII. Caps. IV. N. 13

Դիր հաւատոյ խոսովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ գոր խնդրեաց ի մենջ Առաքելական հայրն մեր Պապն Հռոմայ Ինուենցուցն¹ ի ձեռն խոհեմագոյն Լեկաթին² Փրեր Տիմանցին որ է ի կարգի Փրեր Մնուրացն³:

Բանիւք դուզնաքեա իմն խօսելով ի յսեյիս խոհեմագոյնիդ և աստուածասիրի անձին յաղագս մերոյ հաւատոյ դաւանութեան հարցմանց որ ի մէջ տայով պատասխանի: Եւ քանզի խօսեցեալն իմաստք չթափաք՝ ոչ է բնատրեալ ի շտեմարանս յիշողականին մնալ անձախապէս, զմոռացութիւնն ունելով հակառակ, վասն որոյ խնդրէք գրով արձանագրուցանել զնոյն յաղագս անաղարտ մնալոյ առ Ձեզ յիշատակ բանիցն որ ի մէջ: Ձոր և տացուք սիրարար սիրողիդ զիմաստութիւնն ըստ տիմար գիտութեան մերոյ և տկարութեան համառօտ և յայտնի բանիւ: Սակայն զբովանդակն պարտորելով հաւատոյ մեր ճշմարտութեան ի հարցն սրբոց աւանդից բնկալեալ՝ որ է այսպէս: Խոստովանիմք զԱմենասուրբ զԵրրորդութիւնն զՀայր եւ զՈրդի և զՍուրբ Հոգին յերիս անձնաւորութիւնս բաժանելով և ի մի բնութիւն և աստուածութիւն ժողովեալ: Հայր սնծին և անսկիզբն յառաջ քան զյաւիտեանս: Որդի ծնեալ ի բնութենէ հօր անախտ եւ անմարմին նախ քան զժամանակս, Հոգին Սուրբ ըղիւսմն ի Հօրէ, ո՛չ ըստ որդւոյ ծննդեամբ

այլ յառաջ եկեալ աղբւրարար: Ինքեան միայնոյ քննելի օրինակն, եւ յարարածոց անդիտելի: Եւ ո՛չ էր երբեմն Հայր յորժամ ոչ էր ընդ նմին Որդի և Հօրի: ալ որպէս հայր միշտ հայր, եւ ոչ յետոյ ստացեալ զանուն հայրութեան: նոյնպէս և որդի միշտ որդի ընդ հօր իւրոյ մշտնջենաւոր: Այսպէս և Հոգին Սուրբ, միշտ հոգի Աստուծոյ անմեկնելի ի հօրէ և յորդւոյ, մի էութիւն, մի իշխանութիւն, մի կամք, և մի արարչագործութեան զօրութիւն յերիս անձնաւորութիւնս իմանի: Ո՛չ մեծութիւն և ոչ փոքրութիւն: Ո՛չ քարծրութիւն և ոչ խոնարհութիւն: Ո՛չ առաւելութիւն և ոչ նուազութիւն, ալ մի կարգ, մի պաշտօն, մի երկրպագութիւն Ս. Երրորդութեան դաւանի, որով գոյացան յոչէից եղեալքս ամենայն: Երկինք՝ երկնաւորօքն, եւ երկիրս՝ երկրաւորօքն երեւելի և աներեւոյթ արարածք յառաջինն եղեալ արարչութեան: Իսկ յերկրորդումս՝ մի Երրորդութենէն Բանն Հօր Որդին միածին կամաւ Հօր և Հոգւոյն աւետեօք հրեշտակապետին Գաբրիէլի էջ յորովայն Կուսին Մարիամու, ո՛չ նուազելով ի ծոցոյ Հօր ըստ աստուածային անպարագրելի բնութեան: Եւ ձգեալ յարեմէ ամենամաքուր Կուսին որ ի զանգուածոցն Աղամայ միացոյց ընդ աստուածութեան իւրում անքննին և անձառելի խառնամար: Եւ եղև յերկուց կատարեալ բնութեանց յաստուածայնոյ և ի մարդկայնոյ՝ մի անձնաւորութիւն կատարեալ, անայլելի և անքաժանելի բնութեամբ: Ոչ փոփոխելով մարդկային թանձր և յօդական բնութիւնս յանյօդ և ի պարզական բնութիւն Աստուծոյ խառնելով ընդ բնութեան մարմնոյ, վրիպեաց յիւրն յաւէտ պարզութենէ: Թէպէտեւ ասի անմարմնոյն մարմնանալ և բանին թանձրանալ յաղսպս անքակ միութեան: Այլ և խառն ընդ մարմնոյ անմարմին Բանն և միացուցանէ ընդ ինքեան զմարդկային բնութիւնս: աստուածացուցանելով զնա խառնամար և միաւորութեամբն, ոչ փոփոխութեամբ կամ այլայլութիւն ունելով ի միաւորութեան, ըստ որում և ոչ հօգի և մարմին մարդկան, թէպէտ եւ գե-

¹ Իննովկենտիստ

² Նուերակ կամ թելակալ:

³ Minori կոչուած Տիմանցիական կրօնաւորներ:

բագոյն քան զօրինակն իմանի ճշմարտութիւնն, որպէս ընդ արարիչ և արարած գոլ համեմատութիւն: Այլ միաւորեալ զմերս ընդ իւրուսն անհասանելի եղանակաւ և մնացեալ անփոփոխ առօրն եւ առեալն: Ոչ ըմբռնողապէս որպէս օդ և ջուր յամանի զի յարտաքս ելանելն դատարկանայ. այլ բնաւորապէս միացեալ ի վեր քան զքան անբաժանելի և անշփոթ միութեամբ: Եւ առնելով զբնութիւն Ազամայ, ոչ զոր յանմեղութեան և գրախտին, այլ զոր յիտ մեղանացն և ապականութեան: Ձի և Կոյսն Մարիամ յորմէ մարմին առ Քրիստոս ի մեղանշականին Սեդամայ բնութենէն էր, սակայն միաւորելով ընդ բնութեանն Աստուծոյ, մեղանշականն եղեւ անմեղ և ապականացուն՝ արտաքոյ անգոմանելի ապականութեան կրից, որպէս և հրահարելի նիւթք յորժամ ընդ հրոյ միանան ժանգ ապականութեան եթէ իցէ ի նոսա՝ ծախի, իսկ բնութիւնն մաքրելով յապականութենէն անծախելի մնայ:

(Շարունակելի)

ԳԱՐՏԻՆԱԼ ՀԱՍՈՒՆ

(Տեվլամի)

Բաթրիգի միւնթէրէմին սօն պիր թէսէլ-լիսի նօգսսն իսի, վէ պիր սէնէ էվվէլ, եէնի հերձուածողլարըն պաշլըճալարըն վէ հէմբալարընտան չօղլարըն ճիտտի վէ ալէնի սուրէթտէ զարձա կէլմէլէրիլէ, օնօգսսն տա թէքմիլ օլտու: Պու շիգազը մէնհուսըն, Քիլիսանըն արզուսը տալիքէսինտէ զալիլ օլմասը, Մօնս. Հասուեն իչուեն մուճիպի շէրէֆ օլտուզը կիպի, օնուեն գահրամանքեարի սապընըն, րէսուլանէ զայրէթին, վէ հէր շէյտէն էվվէլ, եանլըշլըգտա պուլընանլարըն թարիգի միւնթապիմէ րիւճուլարընը արզու իթտիրէն պէօլիւք մուհապէթինին տէ պիր էսէրի կիւզինի օլմուշ տըր:

Եէնի Բաբա ինթիխապ իսիլմիշ օլան օն իւչիւնճի Լէօն հազրէթլէրինէ իւք տէֆա զիւյարէթէ կիթմէզտէն էվվէլ, պիւզաթ, եէնի

հերձուածողլարըն սէրտարը օլմուշ իւքէն շիմտի նէտամէթէ կէլմիշ վէ հալը իթաաթա կիրմիշ օլան Մօնս. Յովհան Քիւրէլեան վաւթաաղլա, պու նէթիճէյի խոյրըն թէպշիրիլէ ինթիրամթընըն թագաթմինէ միւվէֆֆազ օլտալիլմիշ տիր: Բաբա հազրէթլէրի, Մօնս. Քիւրէլեանըն արզը իթաաթընը գապուլ վէ րիւթպէսինէ իպգասընը իճրա էյլէյէն զարտինալար մէճլիսինտէ քէնտի պու խուսուստաքի մահզուզիլէթինի իզհար էյլէմիշ վէ ալնի զէմանտա Շարզըն ումուլը րուհանիլէսի հազընտա քէրվէրտէ էյլէսիկի թէգայեիւտաթը սամիմանէսինի տէ պիր նութգը րէսմիտէ պէյան իթմիշ տիր:

Բաբա հազրէթլէրինին պու թէգայեիւտի վէ Մօնս. Հասուենըն տա մէզիլէթլէրի, օնը գարտինալլըք բայէսինէ իրֆա էյլէմէք Ֆիքրիի թա օ զէմանտան իլհամ էյլէմիշլէրտի. Ֆիլ վազը տա չըգան սէնէ Բօմայա օլան զիյարէթի էսնասընտա Մօնս. Հասուեն պիւզաթ Բաբա հազրէթլէրինին աղզընտան պու միւթալէյի իշիթմիշ տիր: Սն իւչիւնճիւ Լէօնըն պու Ֆիքրի նէճիպանէսի իլէ Մօնս. Հասուենըն թէվազու վէ մահվիլէթի արասընտա ատէթա պիր ճիտալ տըր ալըլըր, չիւնքի Մօնս. Հասուեն պիւթիւն մէվճուտիլէթիլէ Կիլիկիա Քիլիսասընա մէրպուլթ պուլուենըեօրտը: Պապաթ կիւվէյինին քէնտի վալիտէսինէ տօղրու հիսս իթտիլի մուհապէթէ գարչը արուսէնին պէյանը թէէսիւթ իթմէյէճէյի հասէպիլլէ, Կիլիկիա Քիլիսասը տալի քէնտի Բէյիսինին, պիլ ճիւմէ քիլիսալարըն տա վալիտէսի պուլընան Բօմա Քիլիսասըլլա վազը օլան պու եէնի րէվապիթի գարչըսընտա մէմնուեն վէ մէսրուր օլմամասը միւմքին տէյիլտի: Իշթէ պու միւլսահալար վէ հաթթա Մօնս. Հասուենըն գարտինալ օլմասըլլա, կէրէք գարտինալար մէճիլիլէրինտէ վէ կէրէքսէ Շարգտա մէնաֆիի րուհանիլէնին իսթիհալընը թէմին մագսատըլլա թէսիս օլուենաճագ պէօլիւք միւէսսէսէնին րիյասէթինտէ պուլընարագ քէնտի ճէմաթընա եինէ խալըլը օլապիլէճէյի Ֆիքրիինի, Բաբա հազրէթլէրի ինալինտէ կէրէք Մօնս. Հասուենըն թէվազուընա վէ քէնտի Չօպան:

լարնն միյանէլէրինտէ գալմասնը իսթի-
համէյէյէն ճէմաթըն թէզարրու աթլնա զա-
լէպէ էյլէմիշտի :

Կիլիկիա Պատրիարքըղընա մէնսուպ օլան
բիսղօպօսլարըն , քահանայ վէ ճէմաթըն
պու միւրաճաաթլարը հագգընտա Բարա
հազրէթլէրինին , տահա եագընլարտա վազը
օլան պիր գապուլը խուսուսի էմնալընտա ,
նէ կիպի պիր լիսանր սիթայիշ իսթիմալ էյ-
լէտիյի մալիւմ տիր : Նոյեմբեր 25աէ վազը
օլան պու գապուլտա , Մօնա , Հասուռն ,
Պատրիարքարանըն Բօմա մապահաթկիւղարը
Մօնա , Ֆէրահանըն վէ Բուպիան Յարու-
թիւն սարկաւագընտա հազըր պուլընտրգլարը
սրատա , հաշմէթլու Բարա հազրէթլէրի ,
մէզնէպին էն պէօյիւ : միւտաֆիլէրինտէն
պիրի պուլընան Մօնա , Հասուռն ֆէզայիյի
ճէմիլէսինի միւքիաֆաթլամագ , վէ էրմէնի
գաթօլիքլէրի վէ ումում Շարգ գաթօլիքլէրի
հագգլարընտա բէրվէրտէ էյլէտիյի թէվէճ-
ճիւհի բէտէրանէյէ եէնի պիր աէլիլ տահա
իլավէ իթմէք ֆիքրինտէ պուլընտըղըն պէ-
յան պուլընտըն տըր :

Օն իւշիւնճիւ Լէօնըն Դեկտեմբերին օն
իւշիւնճիւ բազար իրթէսի կիւնքի գարտի-
նալլար մէճլիսինտէ իթթիսալ էյլէտիյի
գարարը մուհիմ իշթէ պու մագսատ վէ պու
հիքմէթէ մէպնի տիր :

Միւշարիլէյի հազրէթլէրի , քէնտինին պու
ֆիլիլինին նէ գատար մուհիմ օլտուղընա
պիր իսպաթ տահա օլմագ իշուռն , օ կիւնքի
մէճլիստէ պիր եալընը Մօնա , Հասուռն
գարտինալըգ բայէսինէ իրֆու էյլէմիշ տիր :
Մօնա , Հասուռն էրմէնի միլլէթինտէն նէշլթ
իթմիշ օլան իլք գարտինալ օլտուղը կիպի ,
օն պէշինճի աարտա տէօրտիւնճիւ Նւգենիոս
Բարա թարաֆընտան գարտինալըղա թէրֆի
իտիլմիշ օլան թրապիղօն բում եպիսկոպոսը
մէշուր Պէսարիօնտան մատա , Սաֆրէ Գօլթ-
տէ հիշ պիր Շարգլը խալէֆի տէ պուլընմա-
մըն տըր :

Բարա հազրէթլէրի , պու եէնի գարտի-
նալըն կէրէք թարղը թէշէպալիւսինտէ կէ-
րէքսէ բէսմի ալինլէր իճրասը զէմանընտա ,
քէնտի գատիւմ էրմէնի գաթօլիք Պատրիարք-

ըղընըն պազը ալսամէթլէրինի մուհաֆազա
էյլէմէսինէ միւսաատէ իթմիշ տիր : Պինաէն
ալէյի , գարտինալ Հասուռն խուսուսի սու-
րէթտէ իճրայի ալին իթտիյինտէ քէնտի ծէս
վէ աւառողուքիւնըն սապլամըն , վէ հէր նէ
գատար տա բէսմի ալինլէրտէ տիկէր գար-
տինալլար միսիլու Լաթին Բիլիսասը ծէսինէ
թապի պուլընմիշ իտէ տէ , եինէ տէ , Շարգ-
տա իսթիմալ իտիլէն վէ քէնտիսինին պիր
վազըթ էրմէնի գաթօլիք Պատրիարք օլտու-
ղընը իյմա էյլէյէն բէսմի փիլօնր թէրք իթ-
մէմիշ տիր :

Մօնա , Հասուռն գարտինալ օլմասընտա-
քի էհէմմիլէթ ու հիքմէթէ մէպնի իտի քի ,
միւշարիլէյին մէնֆատա պուլընտըղ միւտ-
տէթճէ իճրայի վէքէալէթ իթմիշ օլան վէ
հալէն տէ Տէրսատէթտէ Պատրիարք վէքի-
լի պուլընան Նիկոսիա Արքեպիսկոպոսը
Մօնա , Ապարեանըն պիրատէրինին լիյասէթի
թահթընտա էրմէնի գաթօլիքլէրինտէն միւ-
րէքքէպ պիր հէյնէթ Բօմայա իզամ օլուռմըն
տր : Բէզալիք Բրօքականտա թալէպէսի
տախի , պիր վազըթ քէնտիլէրինին հէմ-
պընֆը պուլընմըն օլան , Բիլիսանըն պու եէ-
նի բրէնտինին մէզիլէթլէրինի իլան իշուռն
պիր միւլթէլիֆ իսանլար ագատէմիսի ճէլ-
սէսիլլէ իճրայի մէսէրլէթ էյլէմիշլէր տիր :
Գարտինալ Հասուռն , պիր գարտինալ ինտա-
սընտա տաթթտէն օլան calore տինիլէն իլք
զիյարէթի իշպու Բրօքականտա մէքթէպինտէ
գապուլ էյլէմիշ տիր :

Գարտինալ Հասուռն եալընըգ հայաթընըն
թարիլիլլէ տէյիլ , թէճարիպի մէտիտէ վէ
ֆէզայիլի հասէնէսի նէթիճէսի օլարագ տա
գարտինալլար մէճլիսինէ « եա իհրազը դալե-
պէ իքսէֆ վէ եալսօս եօլսէֆ » եօլընտաքի
հիքմէթամիլ ճիւմլէյի ճէմիլէսինի կէթիլմիշ
տիր : Գարտինալ Հասուռն Բօմա քիլիսասըլա
պու եէնի բէզալիլթլէ մէրպութ օլարագ , օն
իւշիւնճիւ Լէօն բարանըն Շարգ հագգընտա-
քի նիյեաթը ալիճէնապանէսինին թէրվիճինէ
եարտըմ իտէպիլէճէյի կիպի , պու կիւն Բիւր-
սիյի Շէրիֆին մարուղ պուլընտըղ թէճարի-
պին տէ իզթիհամընա մէտար օլապիլէճէք
տիր : Միւշարիլէյին ախիրէն պէյան իթտի-

յի իւզրէ Բիւխանըն միւզաֆֆէր օլաճաղընա շիւպհէ իաիլէմէզ, էվվէթ եա իհրազը Վալէպէ իբլիք վի եալսոս եօլմէք, լաքին մասամ քի բարալըզ մազամը էօլէմէզ, շուհալտէ ճիւմէյի ճէմիլէնին իլք Ֆըգրասը, եանի իհրազը զալէպէ իբլիքսի, մուհազգազ տըր:

Մօնս. Հասունըն գարտինալլըզ իւլթպէսինէ եիւքալէմէսի, ումում Բիւխայա վէ ալէլ խուսուս էպը մուազգէզիմիզ օլան օն իւշիւնճիւ Լէօն բարա հազրէթլէրինէ պաիսի չէրէֆ օլտուզը հասէպիլլէ եէնի պիր բէվիւսպ տահա իքթիսապ էյլէմիշ տիր:

J. B. V.

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ (*)

Ե.

«Ի այլ որ մարդաւր բլլաս,
«ճանոյակասար, բաղքաբարոյ,
«ճեզ, բարեկիրք եւ բարեմոյն,
«Եւ պիտի բլլաս սիրելի»:

Դ.

«Հեզ բլլաս»

Եթէ հեզութիւնը մեծ մարդու մը վրայ պարտք մըն է, պաշտօնի վրայ եղող մարդու մը համար աւելի եւս յարմար է և ատակ իրեն վաստկելու համար ուրիշներուն համարումը և սէրը, քան թէ նոյն իսկ իր պաշտօնը կամ աստիճանը: Իր անձին շուրջը փայլող փառաւորութիւնը՝ անախորժ բլլալու աստիճան զմեզ կը շլացնէ. եւ այն բարձրութիւնը, յորում ինք կը գտնուի, մեր անձնասիրութիւնը մեծապէս կը խոնարհեցնէ, որով մեր նախանձը արգարացնելու համար, պատճառներ կը փնտռենք իր թերութեանց և յանցանաց մէջ: Սակայն, եթէ հեզութեան հրապոյրքը զմեզ շլացնող փառաց ճառագայթները մեղմացնէ, եթէ կերպերու

քաղցրութիւնը մինչեւ մեզի իջեցնէ այն մարդը, որ հասարակաց վիճակէն այնչափ վեր բարձրացած կը թուէր, նախանձը զինքնաթիփ կ'ընէ, ատելութիւնը կը լոնցնէ և բոլոր սրտերը իրեն կը յատկացնէ: Ասոր համար ինք ո'չ մեծ ճիւղեր ընելու, ո'չ անհանգիստ ըլլալու և ո'չ ալ ինքնիրեն բռնութիւն ընելու պէտք ունի. յաճախ խօսք մը միայն, շնորհալի ժպիտ մը, նայուածք մը միայն կը բաւէ: Որպիսի՜ է ուրեմն անիմաստ ամբարտաւորութիւնն անոնց, որոնք միշտ խոժոռ, և արհամարհոտ դէմքով մը, իրենցմէ կ'օտարացնեն այն սրտերը, զորոնք այնչափ դիւրաւ կրնային շահիլ:

Ասոնք, եթէ իրենք իրենց վրայ անդրադառնալ եւ իրենցմէ վեր եղող անձանց՝ իրենց նկատմամբ ի գործ զրած բարութեան պատճառած հաճոյքին վրայ խորհիլ ուզէին, միթէ կրնային հրաժարիլ նոյն բանը ուրիշներու նկատմամբ իրենք ալ ընելու քաղցր գոհունակութենէն:

Տրայանոս կայսրն այսպէս արդար կերպով կը մտածէր: Իր բարեկամները տեսնելով որ ամէն իրեն զիմոզները մեծ մարդասիրութեամբ կ'ընդունէր, իրեն գիտել սուրին թէ կայսերական վեհափառութիւնը կը մոռնար. Կ'ուզեմ որ, պատասխանեց իրենց, իմ ժողովուրդս իմ անձիս վրայ գտնայ այնպիսի կայսր մը, ինչպէս ես պիտի փափաքեի ունենալ, երբ սոսկական մեկը բլլայի:

Մեծե՛ր, հասարակաց մարդիկ, ահա՛ ձեր տիպարը: Կը վախնաք թերեւս շատ խոնարհելէ և զձեզ նուաստացնելէ. բայց այդ վախը անիմաստ ամբարտաւանութիւն մըն է, որ զձեզ կը նուաստացնէ, և արդարեւ ատիկա ապացոյց մըն է թէ դուք ձեզմով միայն միւծ ըլլալու համար ձեր անէական ձիրքերուն վրայ բաւական օճան չէք դնիր, և թէ ձեր բոլոր մեծութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ փոխառութիւն. ատիկա որչափ ամօթալի, նոյնչափ ալ նուաստացուցիչ խոստովանութիւն մըն է թէ դուք ճշգիւ էք այն ինչ որ ըլլալ կը թուիք: Ուր՝ չնհրուն իրեն մօտենալէն այնչափ ստատիկ չի վախնար՝ եթէ ոչ այն մարդը որ կը վախնայ թէ իր պզտիկ

(*) Տե՛ս թիւ 113, էջ 600:

կութիւնը կը նշմարեն : Ճշմարիտ մեծութիւնը ազատ , քաղցր , ընտանեկան եւ ժողովրդական է . թոյլ կու տայ , այսպէս ըսելու համար , որ իրեն դպչին եւ զինքը շօշափեն . բարութեամբ իր ստորագասեալներուն կը խոնարհի , առանց իր արժանապատուութիւնէն բան մը կորսնցնելու : Այսպէս էր Յովսէփ Բ . կայսրը , որուն մարդասիրութիւնը եւ ժողովրդականութիւնը պինքը այնչափ աւելի մեծ կ'ընէին . որչափ ինքը նուազ մեծ երեւնալ կ'աշխատէր : Հեզութիւնը , ինչպէս լատ . կը դիտէ անուանի հեղինակ մը , մեծութեան անբաժանելի յատկանիշը եւ ամենէն ապահով գրոշմն է : Այն փառաւոր եւ հին գերդաստաններուն պայազատները որոնց անուան պերճութեան եւ ծագման հնութեան դէմ ոչ ոք կրնայ վիճել , իրենց ծննդեան ամբարտաւան յաւակնութիւնը իրենց ճակատին վրայ չեն կրեր . եթէ իրենց հնար ըլլայ , թոյլ պիտի տային որ ուրիշները զայն անգիտանան : Իրենց վեհութիւնը ուրիշ բանէ չի հասկըցուիր , եթէ ոչ տեսակ մը ազնիւ պարզութենէ : Եւ իրենք զիրենք աւելի յարգելի կ'ընծայեն՝ իրենց պարտ ու պատշաճ եղած մեծարանքը զժկամակութեամբ ընդունելով , եւ զիրենք մեծարելի ընող այնչափ տխուր ներու մէջ , բարեկրթութիւնը եւ հեզութիւնն է միայն խորը , զոր իրենք սիրայօժար կը խնամեն : Ընդհակառակն կեղծ մեծութիւնը սմարդի եւ անմատչելի է , իբրեւ թէ վախնար որ չըլլայ թէ շատ մօտէն տեսնուելով , ունենալ երեւցածէն շատ բան կորսնցնէ : Այս կարծեցեալ մեծերուն բնակարանները՝ ամբարտաւանութեան եւ պերճութեան տուներ են , ուր անոնք որ իրենց դորձոց համար կ'երթան , աւելի ասոնց տէրերուն մօտենալու միջոցներուն քան թէ իրենց պատճառները եւ իրաւունքը անոնց յայտնելու վրայ կը խորհին : Ամբարտաւան կուռքեր , որոնց դողալով միայն հնար է մօտենալ , որոնց հնար չէ ծառայել , եթէ ոչ աչքերը երկիւղածութեամբ զեպին խոնարհելով . եւ յարգելի չեն , եթէ ոչ իրենց ներշնչած վախով . անոնք որ իրենց սէտք ունին , զանոնք կը սպաշտեն , ուրիշները զիրենք կը ծաղրեն եւ կ'արհամարհեն :

Բարձր դասակարգի գերմանացի տիկին մը , իր տունը գաղղիացի սպաներ ընդունեցաւ մեծութեան եւ արժանապատուութեան այնպիսի հպարտ կերպով մը , որ զիրենք վշտացուց : Ասոնք մէկիկ մէկիկ թողուցին գաղին : Վերջին մեկնողները իրենց ընկերացող ծառային ըսին . Գնա՛ սիրուհւոյդ բնկերութիւն թրե՛ :

Թարգմ. Ն. Մ. Վ. ԱՃԷՄԵԱՆ
(Շարունակելի)

Պողոս Բահանայապետ Ե.ի առ Զափարիա
Պատրիարք յղած նամակներուն բնագիրը

Գ. Ն ա մ ա կ

Առ Դեասրանի Գաղղիոյ

(Հայերէն քարգմանութիւնը տես Կ. Արմազանց թիւ 110, էջ 551):

Archiv. Vat. Paulus P. P. V. Anno IX

Tom. 45 Epist. 124

Dilecto filio Nobili Viro Oratori Regis Christianissimi
Constantinopoli commoranti

PAULUS PAPA V

Dilecte fili Nobilis Vir salutem et
Apostolicam Benedictionem

Significavit Nobis dilectus filius Zacaria Vartabet venerabilis fratris Melchisedech Armeniae Majoris Patriarchae ad Nos legatus, se superiori anno cum ex urbe in Armeniam reverteretur, Constantinopolim venisse, et ab Episcopis, sacerdotibus et populo nationis suae praefectum esse Ecclesiae quam istic habent, quodam Gregorio, qui illi tunc praesidebat, ejecto; quia maximo cum fidelium scandalo detulisset ad Turcas, eumdem dilectum filium Zacariam exploratorem esse Regis Persarum belli instaurandi causa ad Nos mi sum. Diligimus quidem summo opere Zacariam, nam ea probitatis, ac virtutis signa Nobis dedit, dum apud Nos fuit, ut merito sibi Nostram paternam charitatem valde conciliaverit. Ad haec in divina misericordia confisi speramus o-

peram suam in administratione Ecclesiae Armenorum istic commorantium valde opportunam fore ad eorum conjunctionem polissimum cum sancta apostolica Sede conservandam. Propterea in omnibus, quæ cum Domino possumus, ei favere ex animo desideramus. Quia vero patrcinuum tuum sibi valde necessarium esse Nobis ostendit, Nobilitatem tuam efficacissime requirimus, ut hunc filium Nobis apprime dilectum quamcommendatum nostra causa habeas, ejusque protectionem atque tutelam suscipias, ita ut gratia et auctoritate tua fultus possit tuto ac pacifice Ecclesiae suæ inservire. In qua re præstabis Nobis officium filialis tuæ in Nos observantiæ gratissimum, ac pietate ac religione tua dignum, cujus semper memores erimus et Nobilitati tuæ Benedictionem Nostram Apostolicam peramanter impertimur. Datum Romæ apud Sanctum Petrum sub annulo Piscatoris XIII Kalendas Novembris 1613, Pontificatus Nostri Anno nono.

ԱԶԳ ԵՒ ԿՐԾՆՔ

Պ.

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ

Տեսանք թէ հին ազգաց մէջ ազգայնութեան չափազանց անձուկ գաղափարը ինչպէս արգելք եղած էր յառաջագիւծութեան, և ատելութեան ոգի սերմանած էր:

Քրիստոնէութիւնը՝ բոլորովին նոր սկզբունքներու վրայ հիմնեց անհատներու և ազգերու յարաբերութիւնները: Քրիստոս իւր վարդապետութիւնը Հրէաստանի մէջ քարոզելէ և իւր մահուամբն ու յարութեամբը՝ զայն հաստատելէ ետքը՝ երբ իւր ընտրած առաքելոց պաշտօն կը յանձնէր իւր սկսած գործը շարունակելու. անոնց չըսաւ միայն թէ՛ գացէ՛ք Հրէաստանի այլեւայլ քաղաքներ.

ըը քարոզեցէ՛ք իրենց այսչափ տարիներէ և գարերէ ի վեր սպասած Մեսիային գալուստը. հապա զանոնք զրկեց նաեւ աշխարհիս ամէն կողմը բարի լուրը աւետելու ամբողջ մարդկութեան. «Գնացե՛ք առաւելեցեցե՛ք զամենայն Հեթանոս», առանց ազգի, ցեղի, քաղաքի խտրութեան. որպէս զի ամենուն սորվեցնեն բացարձակ ճշմարտութիւնը որ չի կրնար երբեք կապուիլ ազգի, ցեղի, տեղւոյ. և որովհետեւ կրօնք ըսելն բացարձակ ճշմարտութիւն, նա մանաւանդ Աստուծոյ յայտնուած ճշմարտութիւն ըսել է, հետեւաբար չի կրնար տարբեր ըլլալ այլեւայլ ազգերու, ցեղերու, տեղերու համար:

Հոս գուցէ մէկը առարկէ թէ՛ քանի որ ճշմարտիւ կրօնքը ընդհանուր մարդկութեան համար է, ինչո՞ւ հին ուխտի միջոցին Աստուած այնչափ բացարձակ կերպով արգելեց Հրէից ուրիշ ազգերու հետ յարաբերութիւն ունենալ: Ասոր կը պատասխանենք թէ՛ այս արգելքներուն նպատակը չէր որ Հրեայք ուրիշներու շտրվեցնեն իրենց անմոլար ճշմարտութիւններն, այլ նկատի առնելով զիրենք չըջապատող բազմաթիւ ազգերու շեղասակար ազգեցութիւնը՝ աստուածային նախախնամութիւնը զիրենք պաշտպանել ուզեց այդ չար օրինակներէ:

Ուստի կրօնքն ճշմարէն Աստուծոյ միացնող կապն ըլլալով՝ ինչպէս որ Աստուած մի է, կրօնքն եւս պէտք է մէկ ըլլայ. և ահա այս է Քրիստոնէութեան հիմը՝ միացնել կրօնքով ամբողջ մարդկութիւնը որ իբր ազգ տարբեր տարբեր լեզուներ, շահեր, սովորութիւններ, յատկութիւններ նպատակներ և միջոցներ ունին: Հետեւաբար Հայը, Յոյնը, Ֆրանսացին, Անգլիացին Ռուսը, Գերմանացին, Պոլկարը՝ չեն կրնար տարբեր կրօնքներով ծառայել Աստուծոյ մը որ ինքն մի ըլլալով՝ միեւնոյն կերպով կ'ուզէ պաշտուիլ ամէն մարդէ. ճշմարտութիւն ըլլալով՝ չի կրնար փոխուիլ ամէն ազգի համար. և ահա այդ սկզբունքն է զոր կը զստանինք հանդանուակին մէջ երբ կ'ըսենք. «Հաւատամք ձեր կաթողիկէ եկեղեցի», որ Քրիստոսէ պաշտօն ընդունած է մարդկանց առաջնորդել, կրօնա-

կան պարտականութեան կատարման մասին . այս ճշմարտութիւնն է զոր կը քարոզէ Պօղոս Առաքեալը երբ կը գոչէ . «Ձգեցարո՛ւք զնոր մարդն ըստ պատկերի արարչին իւրոյ . ուր ոչ է Հրեայ եւ ոչ հեթանոս, քիւսոսութիւն եւ անքիւսոսութիւն, խուժ, դուժ, սկիւքացի, ծառայ ազատ», որ է քրիստոնէութեան ընդհանուր եղբայրութեան սկզբունքը :

Եւ որպէս զի կրօնական այս միութիւնը հաստատ կռուանի մը վրայ յենուք՝ Քրիստոս՝ իր սորվեցուցած կրօնքին մէջ՝ այս եղբայրակցութեան հիմ դրաւ սէրն առ ամբողջ մարդկութիւնը : Քրիստոնէութեան մէջ ամենակարեւոր տեղ մը կը լսուի սէրն առ ընկերն , եւ ընկեր ըսելով կը հասկնայ ոչ միայն եղբայրը , ազգակիցը , բարեկամը , քաղաքացին , ազգակիցը ինչպէս կ'ըմբռնէին հին ազգերը , հապա նաեւ ամէն օտարները , անոնք զոր եւ ոչ կը ճանչնանք . այսչափն ալ բաւ համարելով , իբր եղբայր կը ներկայացնէ նաեւ զանոնք զոր բնութիւնը թշնամի կ'անուանէ , այսինքն անոնք որ մեզի մեծաւ մը հասցուցած են , կամ կ'ուզեն չարիք մը ընել . առնոյ ամենուն համար սիրոյ պատուիրանը իւր որոշ կանոնները ունի . կանոններ , որոնք այնքան իմաստութեամբ դրուած են որ առանց ընտանեկան , քաղաքական եւ ազգային շահերու մեղսելու , առանց այս այլեւայլ հաւաքոյթները կազմող անդամներու՝ իրարու նկատմամբ ունեցած պարտականութիւնները արգիլելու , աւելի առաջ կ'երթայ եւ ամբողջ մարդկային ընկերութիւնը կը միացնէ հաւատոյ եւ կրօնքի սքանչելի միութեամբ , միութիւն՝ որ հիմնուած է ամէն մարդոց փոխադարձ սիրոյն վրայ :

Եթէ այս սիրոյ պատուիրանը իւր ամբողջ ընդարձակութեամբ ճշգիւ գործադրուէր՝ բարոյախօսին եւ ընկերաբանին աչաց առջեւ ներկայացող որչափ անկարգութիւններ իսպառ պիտի անհետանային մարդկութեան մէջէն : Եւ յիշուի նախկին քրիստոնէից վարելակերպին մէջ՝ հեթանոսաց հիացումն հրաւիրող դիւսաւոր կէտերէն մէկն ալ էր թէ՛ ինչպէս անոնք զիրար կը սիրէին , որչափ ալ

տարբեր քաղաքներէ , ցեղերէ , ազգերէ ըլլային . եւ շատ մը հեթանոսներու դարձի պատճառ եղած է այն սէրը , զոր քրիստոնեայք ցցուցած են իրենց հալածիչներուն եւ թշնամիներուն հանդէպ : Եւ այսօր իսկ քրիստոնէութեան ազդեցութեան նուազիլը եւ շատ մը ընկերաբանական անլուծելի խնդիրներու ներկայութիւնը ուրիշ բանէ առաջ չի գար եթէ ոչ նոյն սիրոյ նուազումէն :

Ահա այս միութեան եւ սիրոյ կապը՝ որ շատ դիւրաւ թափանցած էր նախնի քրիստոնեայ անհատներու յարաբերութեանց մէջ , այս կապը՝ կ'ըսեմ , պէտք էր նաեւ միացնէր հաւաքական մարմիններն՝ ինչ որ աւելի զգուարին եւ ժամանակի կարօտ էր :

Հռովմէական կայսրութիւնը իւր սիրապետութեան տակ առած ըլլալով նոյն ժամանակի գրեթէ ամբողջ աշխարհը՝ պէտք էր նախ այդ հսկայ կայսրութեան ներշնչել սոյն ոգին , ինչ որ կարօտ եղաւ երեք երկարատեւ դարերու , չարաչար հալածանքներու ենթարկուելով եւ միլիոնաւոր զոհեր տալով : Յիշուի , Հռովմէական կայսրութիւնը՝ ի սկզբանէ՝ ոչ միայն կ'արհամարհէր քրիստոնէութիւնը իբր օտարամուտ , այլ եւ կ'ատէր իսկ առանց անոր իսկութիւնը հասկնալ ուզելու , զայն կայսրութեան համար իբր վնասակար վարդապետութիւն մը նկատելով :

Բայց վերջապէս ստիպուեցաւ տեղի տալ այս բարոյական ուժին առջեւ . եւ հաճախ վայրկեանէն սկսեալ տեղութեանց հետ յարաբերութիւնք կամաց կամաց փոխուեցան , մասնաւոր երբ ուրիշ թագաւորութիւններ եւս քրիստոնէութիւնը ընդունեցան՝ բնական բերումով մը իրենց մէջ բարեկամական յարաբերութիւններ սկսան մշակուիլ . առաջուց իբր ամենէն բարբարոս նկատուած ազգերն անգամ՝ քրիստոնէութեան դրօշին տակ մտածնուն պէս՝ այլեւս իբր օտար չէին նկատուեր քանի որ անոնք ալ նոյն երկնաւոր թագաւորին հպատակներն էին :

Բաւական ժամանակէ ի վեր ներքին անգարմանելի ախտէ վարակուած Հռովմէական կայսրութիւնը՝ հեռուէն խուժող բարբարոս ժողովուրդներու թափին դիմանալու անկա-

րող ըլլալովն՝ երբ այլեւայլ մասերու բաժնուեցաւ, քրիստոնէութեան սկզբունքն էր որ քիչ շատ մեղմացուց այն հսկայ մարմնոյն քայքայման առթիւ գուշակուած աղէտները: Հոովմէական կայսրութեան աւերակներուն վրայ՝ կանգուն մնացած էր միայն քրիստոնէական եկեղեցին իւր բարոյական առույգ ոյժովը. սա անմիջապէս գործի սկսաւ և նոր հասնող ժողովուրդներուն ներշնչեց ելլալորական սիրոյ ոգին՝ որով, տակաւ առ տակաւ կազմուած պետութիւնները թէ եւ չէին դադրեր ազգայնական նախանձով իրարու մրցակից և սուէպ թշնամի ըլլալէ, սակայն եկեղեցւոյ աղդեցութեան ներքեւ կը ստիպուէին զսպել իրենց բնազդական կործանարար գործունէութիւնը և ազգայնական ոգւոյ չափազանցութիւնները. կամայ ակուսայ կ'ենթարկուէին միջազգային արդարութեան մը գաղափարին որ վերջապէս մոտաք գտած էր ժողովրդոց մէջ. եւ իւրաքանչիւր պետութիւն ուրիշի մը վրայ յարձակելէ առաջ, իւր նիւթական ոյժն կշռելով հանդերձ պէտք կը զգար քիչ թէ շատ իրաւացի պատճառներ գտնել. ապա թէ ոչ իր առջև ցրցուած կը տեսնար ընդհանուր արդարութեան պաշտպան եկեղեցւոյ հեղինակութիւնը որ ի վիճակի էր ինքզինքը յարգել տալու:

(Շարունակելի)

ՄԱՐԶՈՒԱՆԷՆ

Մարդուանու մէջ կատարուեցան շքեղօրէն Կոստանդինեան յօբելեանին կամ եկեղեցւոյ ազատագրութեան տարեդարձը, որուն միացաւ Հայոց 'ի Քրիստոնէութիւն դարձի յօբելեանը, որ զուգընթաց համարելու է Կոստանդինոսի դարձին: Հանդէսն բացուեցաւ «Լուսաւորիչ կամ Հայաստանի Դարձը» շքեղ տուամով մը, որ հինգ արարուածներու մէջ հիմնալի կերպով կ'ամփոփէր մեծ դէպքը. 6 պատկերացում բացին եւ փակեցին արարուածներն եւ անոնց մէջ կարգաց ամէն դասակարգի Հայը թէ իր ազգային գոյութիւնը կը պարտի քրիստոնէու-

թեան, թէ՛ Լուսաւորիչ եղաւ փրկիչ մը աւոր թէ հոգւոյն եւ թէ մարմնոյն. թէ՛ խաչի ոտքը գտաւ նա իր վերածնունդը և կեանքի երաշխաւորութիւնը: Ամէն տեսարան խանդավառութեամբ ծափահարուեցաւ, պատկերացումներու առջև խուռն յազմութիւնը երկնային տեսիլքներու առջև գտնուածի պէս շունչը իսկ կը բռնէր չխանգարելու համար ընդհանուր զմայլանքը. Մարդուան նմանը տեսած չէր: Վերջին պատկերացումը կատարեալ apothéose մըն էր. Լուսաւորիչ վիրապէն նոր ելած, թագաւոր նախարարներու քուրմեր բժշկուած ու զարձի եկած յանկարծ երկնային տեսիլքի մը դիմացը կը գլուխուէին՝ շլացուցիչ լուսոյ մը և Պէնկալներու երփներանգ գոյներու փաղփիւններն մէջ կը տեսնուէ խաչը յաղթական հրեշտակներէ ու դեռատի հայ նորեկ մարտիրոսներէ շրջապատուած ամպերու մէջ. տեսիլքին առջև ամէնքը կը խոնարհին ու կ'ողջունեն տէրունական նշանը «Մի խաչափայտ» յաղթական երգով:— Ներկայացուցումի հեղինակութիւնը, անոր զգեստեղէններուն ճիշտ ժամանակին տարազով պատրաստութիւնը, զարդերն ու նկարներն, ինչպէս նաեւ Աղքատախնամ Եղբայրութեան թատերախումբի մարզանքը այս առթիւ կը պարտի Մարդուան իր եռանդուն եւ անձնուէր Հոգաբարձու քահանային, Յօղունի Յովսէփ վարդապետին, որուն ջերմ խնդակցութիւններ եղան: Չորս անգամ ներկայացուեցաւ եւ ամէն անգամ խուռն էր բազմութիւնը եւ գոհ լիովին, այնպէս որ շատերը քանի մը անգամ ուզեցին ներկայ գտնուիլ եւ պիտի բաղձային տակաւին կրկնութիւնը լսել եւ Աղքատաց արկղը բաւական հասոյթ մը ունեցաւ այդ առթիւ:

Աղքատախնամ եկայրութեան թատերախումբն ալ հիանալի անձնուէրութիւն ցուցուց. քոանէ աւելի դերասանք իրենց հանգիստն եւ գործն իսկ զոհած էին գործակցելու համար իրենց վարդապետին անձնուիրութեան: Պատճառ ալ ունէին, իրենց Եղբայրութեան քսան եւ հինգամսայ տարեդարձը կը զուգադիպէր, զոր եւ տօնեցին

վայելչօրէն: Եկեղեցւոյ մէջ եռօրեայ հանգէս մը կատարուեցաւ, որուն ամէն անդամներ ներկայ գտնուեցան, խուռն բազմութեան մը բարի օրինակ տալով. իրենք սկսան հանգէսը ամէն անգամ խաչի երգով խմբովին, որուն ընկերակցեցաւ իւր նուագախումբը: Երգէն վերջ Արհի. վիճակաւոր եպիսկոպոսը ատենախօսեց թէ Կոստանդինեան հարիւրամեկի եւ թէ Աղքատախնամի յարմար նիւթերու վրայ՝ գրաւիչ ոճով, կայտառ պատճառաբանութեամբ, որուն հոծ բազմութիւնը ունկնդրեց հմայուած: Ուստի երգէն առիթ առնելով առաջին օր խաչիւ քրիստոնէից ազատագրութեան ակնարկելէ ետք ցուցուց որ մարդկային անցեալ ընկերութիւնը Քրիստոսի միայն վերանորոգ կազմուեցաւ հիմնապէս, կազմուեցաւ անոր Գլուխն, իշխանութիւնը, որ հեթանոսին ձեռքը մարդկային սեպհականութիւն մը դարձած էր, հետեւաբար բռնապետութիւն, հետեւաբար մարդուն ամպարիշտ աստուածացումն եղած էր. Քրիստոս պաշտօնէութիւն մը հրատարակեց զայն, միայն Աստուծոյ սեպհականութիւն, որով իշխանն եւ պետն Աստուծոյ սպասաւոր ըրաւ, եւ քաղցրացուց անոր հեթանոսական բրտութիւնը հայրութեան փոխելով, Կազմուեցաւ հպատակութիւնն, որ հեթանոսութեան մէջ գերութիւն էր եւ եղաւ գործակցութիւն մը իշխանութեան ու վերջապէս որդիութիւն: Կազմուեցաւ ընկերակցութիւնն՝ որ իշխանութիւնն հպատակութեան կը հանգուցէ. և սա եղաւ վերջնականապէս եղբայրութիւն, ու մարդիկ որ հեթանոսութեամբ զիրար չէին ճանչնար՝ քրիստոնէութեամբ խաչին ստոր զիրար գրկեցին: Իշխանութիւնն օրէնքն էր, հպատակութիւնը՝ օրինաց հնազանդութիւն որ ըսել է պատճ, եղբայրութիւնն եղաւ իրաւունք՝ երկուքին հակակշիռ, հայր ու որդի իրարու զիմագիծ տեսան եղբոր մէջ և հոն ընկերական մարմինը վերջնականապէս զանգուեցաւ ՚ի Քրիստոս: — Երկրորդ օրը խօսեցաւ Սօսիալիզմի (Ընկերավարականութեան) վրայ որ փորձելով վերջին տարիներս քրիստոնէութեան տեղն ընկերութեան մէջ,

զայն ցրուեց: Յուշուց թէ Սօսիալիզմի գրութիւնը ու վարդապետութիւնը ուրացումն մի է քրիստոնէութեան և քսնիդումն ընկերութեան. անիկայ հարուստի և աղքատի վերջնական վախճան գրաւ երկրաւոր վայելքը, հարուստը տօր վրայ խիղճ չըրաւ հակառակ օրինաց ու արդարութեան գանձելու եւ ճոխանալու, որով երեւան հկաւ վաճառականական ազատութիւնը ու ձեռնուցաւոր յափշտակութեամբ՝ մենաշնորհի եւ դրամագլխոյ օրէնքը շահագործեց ՚ի վնաս մեծամասն դասակարգին՝ աղքատին աղքատը խիղճ չըրաւ զչարելու, միալու հարուստին դէմ և պոռաց անոր երեսն ՚ի վեր. «Սկսեցիր ձեռքէս երկինքը, տո՛ւր երկիրը» և «հա՛» ընկերական անհաւասարութեան աւանանքն փոսերու, վիհերու չափ խորունկցան ու լայնցան. բնական անհաւասարութեան դէմ բողոքած ատեն Սօսիալիզմը շարութենէ փորուած ահաւոր անհաւասարութիւնները պեղեց: Այս գաղափարը ընդլայնեց գործնական եւ ժամանակակից շարժումի խօսուն օրինակներով: Սօսիալիզմը, ըսաւ փակելով խօսքը, Սերվիու Տուզզիուսի անգղամազջիկն է, որ իւր էրիկը հօրը տեղ թագաւոր ողջունելու համար կառքով սպանուած Հօրը, ընկերութեան, դիակին վրայէն կը սպառնայ անցնիլ զայն ճգմելով:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

Նոյեմբեր 30	† Կիր. 94. Գ. Յիսնակաց
Դեկտեմբեր 1	Բշ. ԳԿ. Սրբոց Հարցն Եգիպտացոց:
2	Գշ. Գձ. Մինասայ Եմոգինեայ, Եգիպտոսի եւ կամաւոր աղքատացն Յովնանու եւ Ալեքսիանոսի:
3	Դշ. ԳԿ. Պանոց:
4	Եշ. ամ. Ս. Առաքելացն Բարբաղիմէոսի եւ Յուդայի:
5	Ուրբ. ակ. Պանոց:
6	Շր. Դձ. Նիկողայոսի սփանելագործ Հայրապետի:

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

(Շար.)

Ոսկերերան ձեռնադրուելէն յետոյ իր ամբողջ ուժովը ջանաց ժողովուրդը կրթելու հաւատքի և բարոյականի մէջ, իր լեզուն գրաւիչ և համոզիչ էր: Հայրապետանոցի եկեղեցւոյն մէջ, խառն բազմութեան առջեւ եռանդաբէն կը քարոզէր և Անուանեաց և ուրիշ աղանդաւորներու մոլորութիւնները անդիմադրելի փաստերով կը յաղթահարէր: Հայրապետութեան առաջին տարին ծանր աշխատութեանց հետեւանօք հիւանդացաւ. բայց երբ առողջացաւ դարձաւ քարոզութեան սկսուաւ Ս. Հայրապետը ամէն բանէ աւելի փափաքելով կղերականաց կրթութեան, միշտ խօսքով և մանաւանդ օրինակաւ կը ջանար յորդորելու զանոնք որ իրենց կոչման արժանի ընթացք մը ունենան: Ասոր համար ինք յատուկ կանոն դրաւ իրեն միտ առանձին ուտել, ուրիշին սեղանը չերթալ: Ուրիշը իր սեղանը չհրաւիրել. որով շատ մը անկարգութեանց առջեւը առաւ. այս սովորութիւնը տհաճութիւն պատճառեց քանի մը աւագներու և եկեղեցականներու: Դարձեալ եկեղեցւոյ հասցիքներէն բնաւ բաժին չէր առնուր. այլ ամէնը աղքատաց և եկեղեցւոյ համար ծախել կու տար: Հայրապետանոցին ծախքերը նուազեցնելով աղքատաց և հիւանդաց ողորմութիւն կու տար և անոնց համար պատապարաններ կը շինէր: Այսպիսի օրինակներով և միանգամայն ազգու քարոզներով ազահուած իւր և որկրամոլութիւնը կշտամբելով, աշխարհասէր և ունայնասէր եկեղեցականներու մէջ մտած շատ մը անկարգութիւններ վերցուց. գրեց նաև մի քանի քահանաներու անարժան սովորութեան գէժ, որոնք իրենց տան մէջ քոյր կոչուած կոյսեր կը պահէին իրենց սպասաւորութեան համար:

Ստեպ կը խօսէր Ս. Հայրապետը առանձնական և հասարակաց աղօթքներու մասին. պատուիրելով եկեղեցի յաճախել և առաւել իրիկուն աղօթել գոնէ տան մէջ: Եկեղեցական պաշտամունքն ու երգերն ալ կարգաւորեց ու սահմանեց արծաթ խաչերով ու մոմերով թափարի կէտ և քաղբին մէջ երգել հանդիսապէս: Արիւնտները, որ առաջնաց սկսած էին այսպիսի թափօրներ ընել, ասոր վրայ զայրանալով քաղբին մէջ մեծ խռովութիւն հանեցին. երկու կողմէն ալ մի քանի հոգի մեռան, որոնց մէջ էր նաև Բրիտան, թագուհիին սենեկապանը, որուն ճակատը քարով զարկին փշեցին: Արիւնտները Կայսր խափանեց Արիւնտաց սովորութիւնը, բայց Ոսկերերանի ուղղափառ եկեղեցւոյն մէջ սահմանածը մնաց:

Ս. Հայրապետը կարգաւորեց նաև Յունաց պատարագամատոյցը, ինչպէս որ ըրած էր Ս. Բարսեղ Կապադովկիոյ մէջ: Ոսկերերանի ուղակերտը Ս. Պրոկղ այս երկուքն ալ կը յիշատակէ. Հռոմայ Ս. Կղեմէս Հայրապետէն և Նրուսաղէմի առաջին եպիս-

կոպոս Ս. Յակոբէն աւանդաւածները մէջ բերելէ յետոյ կ'աւելցնէ թէ Բարսեղ և Ոսկերերան համառօտեցին զանոնք, որպէս զի չըլլայ թէ երկարութեան խորշելով խոտորին առաքելական աւանդութիւններէն և օտարոտի տարադրութեանց հետեւին:

Հոս Սողոմենոս ահաւոր հրաշք մը կը պատմէ. մակեդոնեան հոգեմարտ աղանդաւոր մը Ս. Հայրապետին խօսքերէն շարժած դարձաւ ուղղափառ եղաւ, և դարձի կը յորդորէր նաև իր կնիք, որ վախէն հաւանութիւն ցոյց տուաւ և էրիկը խորիկ ուղղով, աղախինին հետ խօսք մէկ ըրաւ և գնաց եկեղեցին, և հոն յանդգնեցաւ հաղորդութիւն առնուլ. բայց չճաշակեց, այլ բերին մէջ պահեց և տունը բերաւ և հոն երբ ուղեց ծով. քարի պէս պիղծացաւ հաղորդութիւնը: Կնիք վախճալով որ չըլլայ թէ Աստուծոյ պատուհասուի, շուտով ելաւ գնաց Ս. Հայրապետին սօքը ինկաւ և իւր յանցանքը պատմելով ցոյց տուաւ քարը, որուն վրայ տկուայի նշաններ կային. և սուրբին խրատով դարձաւ ուղղափառ եղաւ: Խօսքիս չհաւատացողը, կ'ըսէ պատմաւորներ, թո՛ղ գայ տեսնէ այն քարը, որ մինչև հիմայ եկեղեցւոյ գոնձին մէջ կը պահուի, և ինչ նիւթէ ըլլալը չի գիտցուիր:

Ոսկերերանի համարձակախօսութիւնը, որով քարոզներուն մէջ անխտիր ամէն ախտ և կիրք կը յանդիմանէր, շատ մեծ օգուտ կ'ընէր առ հասարակ ժողովրդեան մէջ, բայց իրեն դէմ կը գրգռէր նաև շատերը, որոնք կը զրպարտէին զինքը և կ'ուսէին: Սակայն ինքը կը շարունակէր իր անվիճելի ընթացքը և միշտ կը կրկնէր Ս. Պողոսի խօսքը. «Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի ապա Քրիստոսի ծառայ ոչ էի»:

Երկու սարկուազ, որ մեծ յանցանքի մէջ բռնուած էին, վարեց եկեղեցիէն, մի քանի անարժան քահանաներ ալ կախակայից: Սուրբ թէև այսպէս անաչառ և խիստ էր անուղղայից հանդէպ, բայց շատ գթօտ և ողորմած էր զղացեալներու և խեղճերու նկատմամբ:

Թէոդորետոս կը պատմէ որ Ս. Հայրապետը տեսնելով թէ Պպիս և չրճականներ բնակող Գոթացիները արիւնտական աղանդին յարած են, զանոնք ուղղափառութեան դարձուց այսպիսի. հնարքով մը. ուղղափառ Գոթացիներէն քանի մը հոգի քահանայ, սարկուազ և զրակարդաց ձեռնադրեց և զանոնք դրաւ առանձին եկեղեցի մը, ուր պաշտամունքը իրենց լեզուով կը կատարուէր. ինքն ալ հոն կ'երթար և թարգմանով կը բարոզէր: Այլափառ Գոթացիները իրարաւորները լսելով կամաց կամաց դարձի եկան:

ՀԱՅԵՆՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
„ՄՏԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝՝ ԳՐԲԷՆ

Գրքի Ա. — Գլ. ԺԶ. — Ուրիշներու պակասութեանց համար
բերելու վրայ:

(Շար.)

Երե մէկը միանգամ կամ երկիցս խառնուելէն
վերջը՝ չամսայ, մի՛ վիճեր անոր հետ, այլ ամէն
րան Աստուծոյ յանձնէ՛, որպէս զի անոր կամքն ու պա-
տիւն ըլլայ իր ամէն ծառայից մէջ, որ քան զիստ չա-
րիքն ի քարին փոխել:

Աշխատէ՛ համբերող ըլլալ եւ այլոց պակասու-
թիւններուն եւ որ եւ իցի տխուր քիւններուն հան-
դումով, որովհետեւ դուք ալ շատ քերտիւն ունիս, ո-
րոնց ուրիշները պիտի հանդուրժեն:

Երե յես կրնար իմիցիմիջ աշխատել ուղղել ինչպէս
որ կ'ուզես, ինչպէս կրնաս պահանջել որ ուրիշն ըստ
յու հաճոյից ըլլայ:

Դիտաւ կ'ուզենք որ ուրիշները կատարեալ ըլլան,
եւ սակայն մեր սեպհական քերտիւնները չենք ուղ-
ղեր:

ՄԵՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՌԵՏԱՐԱՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Փրկչին Ս. Ծնունդը

(Դու. Բ. 4—7)

1. Ու եղաւ՝ այն օրերը, որ հրաման ելաւ Աւգու-
ստս Կայսրէն բուահամար ընելու ամբողջ աշխարհի
մէջ:

2. Այս առաջին բուահամարը կատարուեցաւ Կի-
րենսսի Աստուծոյ վրայ դասաւորութեան ժամանակ:

3. Ու ամէնք կ'երթային բուահամարին մէջ մը-
նելու՝ ամէն մէկը իր քաղաքին մէջ:

4. Յովսէփ ալ ելաւ Գալիլիայէն, Նազարէթ քա-
ղաքէն դէպի Հրէաստան՝ Դաւթի քաղաքը որ Բեթղեհէմ
կը կոչուի. որովհետեւ անկիւ Դաւթի տէն ու ցեղէն
էր,

5. Թուահամարին մէջ մտնելու համար Մարիամին
հետ, որ նշանուած էր անոր ու յղի էր:

6. Ու եղաւ որ, երբ անոնք հոն հասան, լրացան
անոր ծնանելու օրերը:

7. Ու ծնաւ իր անդրանիկ որդին, ու պատեց խն-
ձարուներու մէջ, ու դրաւ զանի մսուրի մէջ, քանզի
անոնց համար տեղ չկար:

1. «Ու եղաւ». Պատմական ոճ է Ս.
Գրքի մէջ գործածուած՝ ըստ եբրայականին:
Աս ոճով Աւետարանիչը կ'ուզէ ցոյց տալ որ

այս արքունական հրովարտակը որ հռոմ-
մէական պետութեան մէջ ընդհանուր աշ-
խարհագիր կամ թուահամար (census, re-
censement, statistique) ընել կը հրամայէր,
ըստ դիպաց եղած բան մը չէր. այլ վերին
տեսչութեամբ կարգադրուած եղաւ, որ՝ ա'ն
ատեն մանաւանդ Աւգուստոս հրամայէր այլ
գործը, երբ Կայսր Մարիամ յղի էր Քրիստոս-
սիւ. որպէս զի ասանկով ստիպուէր Ասի-
կա Նազարէթէն՝ ուր կը բնակէր գալի Բեթ-
ղեհէմ, ուր ըստ մարգարէից կանխասացու-
թեան (Հմմ. Միք. 2. 2) պէտք էր որ ծնա-
նէր Քրիստոս:

2. «Այն օրերը». անորոշ է ժամանակա-
գրութիւնը: Աս ալ եբրայական ոճ մըն է:
(Հմմ. Ելք, Բ. 11, 23. — Ես. ԼԸ, 1.) Այ-
սուհանդերձ այս ժամանակը կը ճշգրտի նոյն
իսկ Ս. Ղուկասէն, եթէ նկատի առնուին
իր ըսածները՝ Գլ. Ա. 26, 36, 56, և Բ.
6—7. — Ըստ ընդհանուր կարծեաց. Յով-
հաննէս Մկրտիչ արդէն ծնած էր, երբ ընդ-
հանուր թուահամարը հրամայուեցաւ:

3. «Հրաման ելաւ», այսինքն հրովար-
տակ մը հրատարակուեցաւ. թագաւորական
խիստ հրաման կամ հրամանագիր, որուն ոչ
ոք կարող է դիմադրել առանց ապստամբ
սեպուելու: Հմմ. Գան. Բ. 13. Գործ. ԺԷ. 7:

4. «Աւգուստոս Կայսր» (ծն. 63 Ն. Ք.),
հռչակաւոր ֆուլիոս Կեսարու քորըր աղջկան
զաւակն էր. Ալեքսանդրի ճակատամարտէն (31
Ն. Ք.) վերջը՝ յորում անկանդնիլի կերպով
ջախջախած էր իր շուայտ ուսոյն Անտո-
նիոսը, համատարած տիեզերք և Հռոմ խո-
նարհեցան ստրկացան իր միահեծան արքա-
յական ցուպին տակ: Ու եղաւ առաջին ինք-
նակալ կամ կայսր Հռոմայ: 57 տարի թա-
գաւորեց ի խաղաղութեան և յերջանկու-
թեան:

5. «Ամբողջ աշխարհի մէջ» (ընդ ամե-
նայն տիեզերք). Թէպէտ ան ատեն երկրա-
գունտի մեծագոյն մասը դեռ անծանօթ կը
մնար աշխարհագրականօրէն, սակայն ծա-
նօթ վայրերուն ամենամեծ մասը հռոմէա-
կան գերիշխանութեան հպատակած էր: Ար-
դէն այս ճարտասանական ձեւը, խելամու-

քիւն (Synecdoche), նոյն իսկ Ս. Գրքին մէջ շատ տեղեր գործածուած կայ. Հմմ. Գործ. ԺԱ. 28. Ի՛. 5. — Մատթ. Ի՛. 45. ԻԱ. 10. — Հռ. Ա. 8, ևն...

6. Այս արքայական հրամանը ուրեմն, ընդհանուր աշխարհագիր մը ընելու համար էր: Թուահամարով պիտի արձանագրուէին հոռմէական պետութեան բոլոր հպատակները, արք. և կանայք ու տղաք, որոնց թիւը կ'ուզէր գիտնալ կայսրը, թէ՛ պատերազմի զօրահանութեան պատահականութեանց և թէ հարկահաւաքութիւնը գիւրացեալու համար: Նման մարդահամար մը ըրած էր Դաւիթ ևս և մեծապէս պատժուած (Բ. Թագ. ԻԴ): Սակայն Աւգոստոս ուրիշ դիտում մըն ալ ունէր. գլխահարկ (capitation) և տուրք սահմանել: Որով, ըստ Յովսէփոսի, Կիւրենոս կը թուահամարէր նաև ամէնուն ստացուածքները ու գրամական կարողութիւնն ալ, եւ անա ստոր համար Հրեայք առհասարակ դժուարեցան. և ան ստին էր որ Յուդա Կաւղանիտացի կամ Գալիլեացի ապստամբեցաւ (Գործ. Ե. 37), ա՛յն պատրուակաւ թէ Հրէիյ օրէն չէր հարկատու ըլլալ հեթանոս թագաւորներու:

Տերուզղիանոս կը վկայէ թէ այս աշխարհագրին մէկ պատճէնը իր ժամանակը (160—240) հռովմէական զիւաններու մէջ զեռ կը պահուէր:

7. Այս հարկը կամ գլխահարկը՝ էր երկգրամեան մը (Հմմ. Մատթ. ԺԷ. 24), որ կէսն էր մէկ սիկլի. և այս արդէն Մովսիսական օրինաց տրամադրութեան համաձայն պարտադրուած էր Հրէից (Հմմ. Ելք. Լ. 13. նաև Թիւք. Գ. 46—47): Նոյնպէս Վեսպասիանոս Կայսր, Հրէից ապստամբութիւնը նուաճելէ վերջը, նոյն քանակութեամբ վերահաստատեց հարկը:

8. Այս երեւելի թուահամարի գործը, զոր հոս իբր անկասկած յառաջ կը բերէ Աւետարանիչը, բանապաշտներու կողմէ այլեւայլ առարկութիւններու կը բաղխի: Որոյ մին է թէ՛ այն յիշուած չի ցանկութիւն արտաքին պատմիչներու քով:

Սակայն պէտք է գիտնալ թէ լայնալիսի

ծիսական ապացոյց մը՝ ըստ տրամաբանութեան չի կրնար ստնանել Աւետարանիչին այսքան դրական վկայութեանը: Տարեգրողները Յուլիոս Կայսեր կատարած այլեւայլ մարդահամարները չեն յիշատակած. սակայն և այնպէս անոնց վրայ բնաւ կասկած չկայ: Բաց աստի, եթէ կասկածի տեղ մը ըլլար այս աշխարհագրի մասին, ի՞նչպէս լուծ պիտի ըլլային Պորփիրոս և Կելսոս (Բ. և Դ. դարերու մէջ), քրիստոնէութեան ռիւերիմ թշնամիները, որոնք ամէն ստութիւն բարգեցին իրենց ընդդիմագիրերուն մէջ և խոշորացոյցով սխալներ կը փնտռէին Աւետարաններու մէջ: Նոյնպէս հնախօսները, իրաւաբանք ու պատմիչք կը հաւաստեն որ Աւգոստոսի քաղաքականութեան հիմնական կէտն էր վիճակագրական վաւերագիրներ յօրինել: Եւ իրմէ մնացած սակաւաթիւ յիշատակարանաց մէջէն կ'ապացուցուի որ այս տեսակ բազմաթիւ մարդահամարներ ըրած է իր երկարատեւ թագաւորութեան միջոցին: Սուետոնիոս պատմիչի (Բ. Դար) համաձայն (Աւգ. Ճ. ՃԱ.), Աւգոստոսի կտակին կըցուած էին երեք վաւերաթուղթեր (documenta, volumina), որոնց երկրորդը կը բովանդակէր իր գործոց ցուցակը. իսկ երրորդը՝ պետութեան համառօտ վիճակագիրը: Իր գործոց հոշակաւոր պատճէն մը կույ Անկիւրիոյ նշանաւոր յիշատակարանին մէջ, որ Աւգոստոս կայսեր ի պատիւ կառուցուած փառահեղ մարմարեայ տաճարին մուտքը կը կազմէր: Անոր մէջ բացայայտօրէն կը խօսուի երեք մարդահամարներու վրայ, որոնց մին կատարուեցաւ յամին Հռոմայ 746, այսինքն Քրիստոսի Տեառն մերոյ ծննդէնէն քիչ առաջ: Նոյնպէս, ըստ վկայութեան Տակիտոսի (Բ. դար) և Սուետոնի, պետութեան վիճակագիրն ալ կը բովանդակէր, ուրիշ բաներէ զատ, նաև բանականներուն, դաշնակիցներուն, տորմիզներուն, թագաւորութեանց, զաւառաց, հարկաց, տուրքերու ևն. թուահամարները (Տակիտ. Տարեգր. Ա. 11). — Իսկ յետագայ պատմիչները շփոթօրէն կը հաստատեն Ս. Ղուկասու խօսքերը, անկէ բոլորովին անկախաբար: Սուտաս կ'ըսէ թէ՛

տափառ Վեհապետին, շնորհաւորելով զանի և արեւշատութեան ու յաջողութեան մաղթանքներ ընելով: Ըստ հրամանի Նորին Սրբութեան, Հռոմի Գերմանական Կաթողիկէից հռչակաւոր Սանքա Մարիա Տէլլ Անլմա եկեղեցւոյն մէջ շքեղ հանդիսութեամբ եւ մեծամեծ եկեղեցական ու աշխարհական պաշտօնատեարց ներկայութեամբ շնորհակալութեան աղօթքներ կատարուեցան, «Ձքեղ Աստուած գովարանեմք» երգուելով:

Աստուած զօրավիգն ըլլայ այսպիսի Վեհապետի մը և երջանկացնէ զայն իր Կաթողիկէ ժողովրդով:

ԿԻՅԵՅՈՒ Ք.Ի ՅՈՒՅԵԼԻՆԱԿԱՆ ԸՆԾԱՆ

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆՑ

Կիյեոմ Բ.Ի կառավարութեան արծաթի յորեղեանին առթիւ, Գերմանական դաշնակցութեան կաթողիկէից կողմէ կատարուած հանգանակութեամբ գոյացեր է ճիշտ 1.781.760 ֆրանքի գումար մը:

Լէօլինչգայնի իշխան Գերապայծառէն, և մի քանի ուրիշ տկանաւոր անձերէ բաղկացած պատուիրակութիւն մը դրած է այս գումարը Կիյեոմ Բ.Ի տրամադրութեան տակ: Ն. Վեհափառ Տէրութիւնը յանձնարարած է այս պատուիրակութեան, իրեն ընծայուած նուէրին բաշխման համար ծրագիր մը պատրաստել: Հոկտեմբեր 29ին, Կայսրը վաւերացուցեր է յօրինուած ծրագիրը, և այդ գումարը շրկուած է Գերմանիոյ պաշտպանութեան տակ գտնուած 22 Կաթողիկէ առաքելութեանց:

Լէօլինչգայնի իշխան Գերապայծառին ստորագրած բաշխացուցակին համեմատ, տասը առաքելական փոխանորդութիւններ և վարչութիւններ 100—150,00 լական ֆրանկ ընդունած են:

Վերջապէս նուէրը բաշխուած է Ափրիկէի մէջ Թոկալանտի, Գամբուզի, գերմանահպատակ հարաւ—արեւմուտքի եւ արեւելքի կողմերը: Ստղագական ովկիանոսին մէջ նրպաստ ընդունած են նոր Կուինէի և ուրիշ մի քանի կղզիներու առաքելութիւնները:

Ուստի Կիյեոմ Բ.Ի յորեղեանին առթիւ Գերման Կաթողիկէից րրած նուէրը ազնիւ և կրօնական նպատակի մը ծառայած է: Այս մասին շնորհաւորելի են նոյն ձեռնարկին մասնակցողները:

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Ս. Քաջանայտպետը իր հաճութիւնը տուաւ որ Բեդերսպուրկի սպանիական դեսպան Վսեմ Կոմս Վեհատա Ս. Աթուոյ մօտ Սպանիոյ դեսպան անուանուի փոխանակ Գալպէգոնի որ վերջերս մեկնեցաւ:

Նոյեմբեր 16ին շքեղօրէն տեղի ունեցաւ Ս. Քաջանայտպետին թագադրութեան տարեգարձին տարողութիւնը, որ այն օրուան փոխադրուած էր:

Հռոմ գտնուող բոլոր Կարդինալները ներկայ էին Ս. Հայրը իր գահը բազմած էր, շրջապատուած իր պալատին իւխաններէն և պաշտօնեաներէն: Ներկայ էին նաեւ Ն. Սրբութեան Փոյրերը և ուրիշ բարձրաստիճան և ազնուական անձեր:

Վիեննայի արքեպիսկոպոս մօտ քաջանայտպետական դեսպան Ռաֆայէլ Սքաբինէլլի Գերապայծառը Հռոմ գնաց և Ս. Հօր ունկնդրութեան ընդունուեցաւ: Ն. Արհիպատուութիւնը քանի մը շաբաթ Հռոմ պիտի կենայ:

Ս. Աթուր Գամպրէի թեմէն մաս մը բաժնելով նոր թեմ մը կազմեց, որուն կեդրոնն է Լիլ քաղաքը և առաջին եպիսկոպոսը՝ Եարօ Գերապայծառը:

Թոլէտի պատրիարքական աթուր որ Վ. Ա. կիրէ Կարդինալին մահուամբ թափուր մնացած էր, ունեցաւ նոր հովիւ մը: Ս. Քաջը սպանիական կառավարութեան հետ միաձայնութեամբ, Սպանիոյ Վալանս քաղաքին արքեպիսկոպոս Կիստուալ Գերապայծառը Թոլէտի պատրիարք անուանեց:

Ամենապատուութիւնը արժանաւոր յաջորդ պիտի ըլլայ Մօնէսգիլլօ և Ա. կիրէ կարդինալներուն, որոնք փառաւորած են Սպանիոյ այս առաջնակարգ աթուր, որուն արքեպիսկոպոսները կը կոչուին Պատրիարք Հնդկաստանի, Նորին առնականութիւն Վեհափառութեան գրան էրէց, արքայական բանակներու ընդհանուր փոխանորդ և Սպանիոյ մէջ Պալլա Գրոնչիալայի ընդհանուր պատուիրակ:

Ամերիկեան պատերազմական նաւարածին մը շրջան կ'ընէ այս օրերս Միջերկրականի ջուրերուն մէջ: Եւստ մը նաւեր խարսխեր են Նեապոլիսի նաւահանգիստին մէջ: Նաւախմբին Կաթողիկէ նաւազները, հրաման աւեր են, ինչպէս նախորդ տարիները, Հռոմ երթալու և Ս. Հօր ներկայանալու:

Պիոս Ժ. հաճեր է տանցմէ 150 հօգի ունկնդրութեան ընդունիլ Գաջասարձին մէջ, Իւրաքանչիւր նաւագի միտալ մը տրուեր է իբր յիշտակ քաջանայտպետական ունկնդրութեան:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Հաճինի ժողովրդապետ Գերապետիւ Արսէն Վ. Խորասանճեանէն կ'ընդունինք հետեւեալը.

«... Տէ՛ր խմբագրապետ,

Բիւզանդիոնի 5181 թիւին Հայ—) գգսյին լու-
րերու բաժնին մէջ, իմ մասին խոշոր սխալ մը հրա-
տարակուեր է հետեւեալ կերպով. Կիրակի օրը (էջմիած-
նականաց) եկեղեցւոյն մէջ, տեղւոյն Առաջ. Փրիսա-
նորդը պատարագելով՝ դարձեալ հոգեհանգիստ տեղի ու-
նեցեր է, ի ներկայութեան Հայ բողոքական պատուելիին
եւ Հայ—Հռոմէական Առաջնորդ Տ Արսէն Վ. ի, ո-
րունք թնկեացած էր՝ այս միջոցին Հանին զսնունդ ժը-
րանացի երեւելի պատմագիր Բէն օր Լարիւ, որ եւն..
Բաղորդին սուա է այս, և բացարձակ զրպարտութիւն:
Ո՛չ ես, ո՛չ Բէն ար Լարիւ երբէք ներկայ չե՛նք գըտ-
նուած Էջմիածնականաց պատարագին և հոգեհան-
գըստեան, որովհետեւ գիտենք թէ մեր հաւատքը
մեզի բացարձակապէս կ'արգելու հրեականաց և
հրեականաց հետ հաղորդակցիլ յասուածայինս:

Է Զ Մ Ի Ա Մ Ն Ա Կ Ա Ն Հ Ա Յ Ե Ր

Առաջիկայ երեսփոխանական ընտրութեանց առ թիւ
պատրիարքարանը պաշտօնագիր մը տուաւ կոտակա-
րութեան խնդրելով որ Հայ երեսփոխանները Հայոց
թուին համեմատութեամբ և Հայերու կողմէ ընտրե-
ալին. կառավարութիւնը ես գործուց այս պաշ-
տօնագիրը յայտարարելով թէ անոր պարունակութիւ-
նը հակառակ է Օսմանեան Սահմանադրութեան
արամադրութեանն.

Ասոր վրայ պատրիարքարանը նորէն գի-
մում րբաւ այս մասին եւ պարզեց պաշտօնագրին
պարունակած գիտաւոր կէտերը՝ թիւ բիւզանդեանց
առջեւը առնելու համար:

Նոյեմբեր 20ին Պոլիս հասաւ Ամին. նորըն-
տիր Զաւէն պատրիարքը, և մեծ քով ողորդուեցաւ:
Նորընտիր պատրիարքը Նոյեմբեր 21ին կայսեր
ներկայացաւ:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Կայսր վաւերացուց Թուրքիոյն ին հաւանութեան
դաւանագիրը, որ նոյ. 21ին կայս. պալատէն յանձ-

նուեցաւ Բ. Դրան. Կալիպ Բեմալի պէյ Աթէնք գը-
նաց զաշնագրին վաւերացեալ պատճէնը յանձնելու
համար հելլէն կառավարութեան: Փոխանակուածը
տեղի պիտի ունենայ Կալիպ Բէմալի պէյի և Յաւ-
նաստանի արաաքին գործոց նախարար Մ. Բանասի
միջեւ: Էմ հէմ պէյ Պերլինի օսմ. գեսպանատան խոր-
հրդականն անուանուած թլլալով Կալիպ Բէմալի պէյի
տեղ, կ'ըսուի թէ այս վերջինն Աթէնքի օսմ. գեսպան
պիտի անուանուի:

* Պատերազմական Ատենին կողմէ դադար-
ման դատապարտուեցան ամբողջ Յունարէն թերթե-
րը, ինչպէս նաեւ Հայերէն ժամանակ օրաթերթը: Յու-
նաց պատրիարքարանին գիմումին վրայ հրատարակ-
ուելու հրաման տրուեցաւ երկու յունարէն թերթի,
Նէպոլոնի և Թասիարոմոսի:

* Բէեաւ «Տերութեանց Արեւելեան քաղաքա-
կանութիւնը» խորագրին տակ կ'ըսէ թէ տերութեանց
այդ քաղաքականութիւնը գաղտնի նպատակներու
վրայ հիմնուած է: Արեւելեան ժողովաւրդներուն
անգործութիւնն ապահովելու մասին չեն մտածեր,
այլ իրենց համար գաղտնի նպատակներ ունին: Պրան-
տցիները ինչ որ Սուրիոյ մէջ բրին Արաբները պատ-
րուակ բռնելով, Ռուսերն այ նոյնն ընել կ'ուզեն Ա-
րեւելեան Առաջօրուի մէջ, Հայերն առաջ քշելով:
Սակայն յուսայի է որ Հայերը, Արաբներուն պէս,
կ'աշխատին Օսմանցիներուն հետ թուամբ մը կանգնել
քաղաքական ալք հնարքներուն առջեւ:

* Իտալիա մեծ բրօքականտ մը կը կատարէ Ա-
տալիոյ մէջ, ուր երկաթուղիի մենաշնորհ ստացում:
Հռոմի թանգարանին տնօրէնն եւ ուրիշ մը հան գա-
ցին Վենետիկեան վաղեմի գրաւումին հետքերը
գտնելու. երկրին տնտեսական վիճակագրութիւն-
ները պատրաստեցին: Անոնցմէ ետքը ժամանեց իտա-
լական հիւպատոսը Մարքիս Յէրրանթի, զոր նա-
ւահանգիստը գտնուող իտալական մարտանաւերը
թիւզանթիներով ողբունեցին: Հիւպատոսը իսկից բր-
բականտի ձեւանարկեց իտալական բերքերու մասին,
որոնց համար թուրքերէն ծանուցումներ փակցուեցան
ամէն կողմ: Յիսուսեանի մը հետ գթութեան տասը
քղեր ալ ժամանեցին: Հիւանդանոց մը և վարժա-
րան մը հաստատուեցան իսկոյն: Իտալական առեւ-
արական շոգեհաւեր ալ միշտ կ'երթ եւեկեն:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հին արժեքաւոր վաւերաբնութիւն	753
Գարսիկայ Հատուն	755
Իմաստութեան սկզբանց վրայ բարոյական եւ պատմական խորհրդածութիւններ	757
Նամակ առ Դեպանն Գալլիոյ	758
Ազգ եւ Կրօնք	759
Մարգուանէն	761
Նոյնեակ Գրիստոնի	762
Մեկնութիւն Ս. Աւետարանի	764
Այլեւայլ	766
Տեղեկագրական	767

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԳՐԱՊԻՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Եաքաքերթի, Բնա. Պարսկ Կառոյ Եւ Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային ժաւրքը, առանձին հրատարակուեցաւ ընտիր Թուղթի վրայ, մաքուր տպագրութեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գեղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէնուն Երանելի նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և, անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ անոր բարեխօսութեան անգուգական արդիւնքները:

Գին 5 դանեկան, էջ 144 ամուր քղրակագր

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանայական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գընողներու, գոհացուցիչ զեղչ:

ԿԸ ԾԱՅՈՒԻ «Տարրական Սկզբունք Քրիստոնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր Թղթակագրը 2 դհկն.:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Société Anonyme au Capital entièrement versé de K. 130.000.000

Réserve: K. 37.300.000

SIÈGE CENTRAL à VIENNE: I. Herrengasse 8.
avec 12 Agences dans les principaux quartiers de la ville.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE: Place de Karakeuy, Galata

BUREAU DE STAMBOUL: Elkiatib Han

BUREAU DE PÉRA: St. Antoine Han

Succursales et Agences à:

<i>Aussig a/E</i>	<i>Carlsbad</i>	<i>Marienbad</i>	<i>Teplitz</i>
<i>Bielitz-Biala</i>	<i>Friedek-Mistek</i>	<i>Pilsen</i>	<i>Tetschen</i>
<i>Brünn</i>	<i>Graz</i>	<i>Prag</i>	<i>Villach</i>
<i>Budapest</i>	<i>Klagenfur</i>	<i>Prossnitz</i>	<i>Wr. Neustadt</i>
<i>Czernowitz</i>	<i>Lemberg</i>	<i>St. Poelten</i>	

La Succursale de Galata, l'Agence de Stamboul et celle de Péra s'occupent de toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets.

Emission de traites, chèques, lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Ouverture de Comptes-Courants, d'acréditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse, garde de valeurs publiques etc. etc.

La Succursale du **Wiener Bank-Verein** à Galata et ses Agences à

Stamboul et Péra ont institué pour faciliter à la petite épargne le placement de ses économies un service de Caisse d'Epargne aux clauses principales suivantes:

Les versements doivent être effectués en Piastres [or; il n'est point] accepté de versement inférieur à Pst. 50.—

Le Wiener Bank-Verein servira au déposant un intérêt fixé aujourd'hui à $3\frac{1}{2}$ % p. a. pour toute somme jusqu'à concurrence de Ltq. 1000— et 3 % seulement pour l'excédent dépassant ce chiffre.